Հաստատված է «ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերության
տնօրենների խորհրդի՝ 2022թ. Հուլիսի 11-ի նիստին
(արձանագրություն №110722)

Խորհրդի նախագահ՝ Ա. Ավետիսյան

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՂ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Էլեկտրոնային փող թողարկելու գործունեության կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանում է «ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից (ա) Էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման (շրջանառության), (բ) պարտավորությունների մարման կարգն ու պայմանները, (գ) էլեկտրոնային փողով գործարքներ իրականացնելիս ներքին հսկողության և անվտանգության ռիսկերի կառավարման պահանջները:

1.2. Կանոնակարգի փոփոխություններն ու լրացումները ուժի մեջ են մտնում պաշտոնական կայքում հրապարակման օրվանից, եթե այլ բան նախատեսված չէ հրապարակման մեջ:

2. Հիմնական հասկացություններ

2.1. **Էլեկտրոնային փող՝** Ընկերության նկատմամբ դրամական պահանջ արտահայտող դրամական արժեք, որը.
ա) պահվում է էլեկտրոնային սարքի վրա,
բ) թողարկվում է ստացված դրամական միջոցների դիմաց, որոնց արժողությունը հավասար է թողարկված էլեկտրոնային փողի արժեքին (Ընկերության թողարկած 1 միավոր էլեկտրոնային փողը հավասար է 1 ՀՀ դրամի),
գ) ընդունվում է որպես վճարամիջոց Թողարկողից տարբերվող այլ անձանց կողմից:

2.2. **Էլեկտրոնային փող թողարկող (այսուհետ՝ Թողարկող)՝** «ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերություն, որը Հայաստանի Հանրապետության տարածքում

իրականացնում է Էլեկտրոնային փողերի թողարկում՝ ՀՀ օրենքների և իրավական այլ ակտերի համաձայն:

2.3. **Էլեկտրոնային փողով հաշվարկների իրականացման «ԹԵԼ-ՍԵԼ» համակարգ (այսուհետ՝ Համակարգ)՝** Թողարկողի կամ Գործակալների, ինչպես նաև Էլեկտրոնային փողի թողարկումը և սպասարկումը ապահովող կարգերի, կանոնների, ապարատածրագրային համալիրի կիրառումը ապահովող գործընթացների ամբողջություն:

2.4. **Համակարգի կանոններ՝** Համակարգի օպերատորի կառավարման իրավասու մարմնի հաստատած կանոններ, որոնց համաձայն՝ սահմանվում է Համակարգում մասնակցության պայմանների, Էլեկտրոնային փողի թողարկման, օգտագործման, սպասարկման և Համակարգում մատուցվող ծառայությունների, քլիրինգի իրականացման ու վերջնահաշվարկի կատարման հետ կապված ընդհանուր կանոնների, ընթացակարգերի և դրանք ապահովող տեխնիկածրագրային միջոցների կիրառման կարգն ու պայմանները:

2.5. **Համակարգի օպերատոր՝** «ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերություն, որը պատասխանատու է Համակարգի գործունեության համար և Համակարգի այլ Մասնակիցների կողմից լիազորված է իրականացնել քլիրինգ և (կամ) վերջնահաշվարկ:

2.6. **Համակարգի մասնակից (այսուհետ՝ Մասնակից)՝** Գործակալ, Թողարկող:

2.7. **Օգտագործող՝** ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ, իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը Թողարկողի հետ կնքած պայմանագրի և Համակարգի կանոնների համաձայն իրավունք է ստացել Թողարկողի նախապես հայտարարած և սահմանած պայմանների ու կանոնների համաձայն իր ձեռք բերած Էլեկտրոնային փողն օգտագործել Համակարգում մատուցվող ծառայություններում:

2.8. **Հաշվառման հաշիվ՝** Թողարկողի տվյալների կենտրոնացված շտեմարանում Օգտագործողի, Ծառայություն մատուցողի, Գործակալի կամ Փոխարկողի (այսուհետ՝ Հաճախորդ, Հաճախորդներ) նկատմամբ Թողարկողի դրամական պարտավորության հաշվառման վերաբերյալ գրառումների ամբողջություն:

2.9. **Էլեկտրոնային փողի սպասարկում՝** Էլեկտրոնային փողով գործառնությունների (ծառայությունների մատուցման) և դրանց հետ կապված հաշվարկների իրականացման ապահովում, որի արդյունքում Օգտագործողը հնարավորություն է ստանում համալրել Հաշվառման հաշիվը և (կամ) Հաշվառման հաշվին առկա Էլեկտրոնային փողը

ներկայացնել մարման և (կամ) փոխանցել Համակարգում գրանցված այլ Օգտագործողներին և (կամ) վճարել Ծառայություն մատուցողներին՝ մատուցված ծառայության, վաճառված ապրանքի, կատարված աշխատանքի և (կամ) քաղաքացիաիրավական այլ գործարքի դիմաց:

2.10. **Էլեկտրոնային փողով կատարված գործառնությունների անդորրագիր՝** ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվային իրավական ակտով սահմանված ձևով կազմված՝ Էլեկտրոնային փողով գործառնության կատարումը հավաստող վճարահաշվարկային փաստաթուղթ:

2.11. **Ծառայություն մատուցող՝** իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը Համակարգի օպերատորի հետ կնքել է պայմանագիր և Համակարգի Կանոնների համաձայն համաձայնել է թողարկված Էլեկտրոնային փողն ընդունել որպես իր կողմից մատուցվող ծառայությունների, վաճառվող ապրանքների, կատարվող աշխատանքների և/կամ քաղաքացիաիրավական այլ գործարքի դիմաց վճարամիջոց:

2.12. **Սպասարկման կետ՝** Ընկերության մասնաճյուղեր:

2.13. **Տերմինալ՝** ավտոմատացված մեքենա, որն ապահովում է որոշակի ծառայությունների դիմաց վճարումների ընդունումը և (կամ) հաճախորդների հաշիվների համալրումը կանխիկ դրամով (վճարումների ընդունման տերմինալ):

2.14. **Գործակալ՝** Թողարկողից տարբերվող ֆինանսական կազմակերպություն, որը Թողարկողի հետ կնքած պայմանագրի և Համակարգի Կանոնների համաձայն իրականացնում է Էլեկտրոնային փողի մարում և (կամ) Օգտագործողի Հաշվառման հաշվի համալրում (լիցքավորում):

2.15. **Ֆինանսական կազմակերպություն՝** դրամական (փողային) փոխանցումների իրականացման լիցենզիա ստացած կազմակերպություն կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկ կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղ:

2.16. **Էլեկտրոնային փողով վճարման իրականացում՝** գործառույթ, որի արդյունքում Ծառայություններ մատուցողի մատուցած ծառայության, վաճառած ապրանքի, կատարած աշխատանքի և (կամ) քաղաքացիաիրավական այլ գործարքի դիմաց վճարումը կատարվում է Էլեկտրոնային փողով՝ Համակարգում գրանցված վճարում նախաձեռնող Օգտագործողի Հաշվառման հաշվում առկա Էլեկտրոնային փողը նվազեցնելով վճարման ենթակա գումարի չափով՝ Համակարգում գրանցված Ծառայություն մատուցողի Հաշվառման հաշիվը ավելացնելու միջոցով:

2.17. **Էլեկտրոնային փողի թողարկում/Հաշվառման հաշվի համալրում (լիցքավորում)՝** գործառույթ, որի արդյունքում Թողարկողը ավելացնում է Համակարգում գրանցված Օգտագործողի Հաշվառման հաշվում առկա Էլեկտրոնային փողը՝ բանկային հաշվից և (կամ) վճարային քարտից, ձեռք բերելով դրամական պարտավորություն Օգտագործողի նկատմամբ:

2.18. **Էլեկտրոնային փողի մարում՝** գործառույթ, որի արդյունքում Թողարկողը Համակարգում գրանցված Հաճախորդի Հաշվառման հաշվում առկա Էլեկտրոնային փողը նվազեցնում է մարման ենթակա հրահանգված գումարի չափով՝ բանկային հաշվին և (կամ) վճարային քարտին փոխանցելու միջոցով, պակասեցնելով իր դրամական պարտավորության չափը Հաճախորդի նկատմամբ:

2.19. **Էլեկտրոնային փողի փոխարկում՝** Թողարկողի գործառույթ, որի արդյունքում իրականացվում է ցանկացած էլեկտրոնային փող թողարկողի թողարկած էլեկտրոնային փողի փոխանակում մեկ այլ համակարգի թողարկած էլեկտրոնային փողով (այսուհետ՝ Փոխարկում): Ընդ որում՝ սույն ենթակետով նախատեսված փոխարկման գործառույթը Թողարկողը կարող է պատվիրակել այլ անձի (այսուհետ՝ Փոխարկող):

2.20. **Էլեկտրոնային փողի փոխանցում՝** գործառույթ, որի արդյունքում Թողարկողի մոտ առաջանում է պարտավորություն՝ Համակարգում գրանցված փոխանցում նախաձեռնող Օգտագործողի Հաշվառման հաշվում առկա Էլեկտրոնային փողը նվազեցնել փոխանցման ենթակա գումարի չափով՝ համարժեք գումարի չափով ավելացնելով Համակարգում գրանցված՝ փոխանցումը ստացող մեկ այլ Օգտագործողի Հաշվառման հաշիվը:

2.21. **Դրամական փոխանցումների համակարգ՝** ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի պահանջները բավարարող՝ դրամական արագ փոխանցումների տեղական կամ արտասահմանյան համակարգ:

2.22. **Բջջային հավելված՝** Թողարկողի կողմից շարժական սարքերում աշխատանքի ծրագրային ապահովում, որի միջոցով հասանելի է դառնում Հաշվի կառավարումը, ծառայություններից օգտվելը, ինչպես նաև Օգտատիրոջ և Ծառայություն մատուցողի միջև տեղեկատվության (այդ թվում՝ էլեկտրոնային ծանուցումների) փոխանակումը:

3. Թողարկողի կողմից մատուցվող ծառայությունների տեսակները, մատուցման կարգը, պայմանները և ժամկետները

3.1. Համակարգը թողարկում է Էլեկտրոնային փող:

3.2. Էլեկտրոնային փող ձեռք բերելու համար Օգտագործողը պետք է Կանոնակարգով սահմանված կարգով անցնի նույնականացման գործընթաց և Համակարգում ստանա նույնականացված Օգտագործողի կարգավիճակ:

3.3. Էլեկտրոնային փողի թողարկման պայմաններն են.

3.3.1. Էլեկտրոնային փողը թողարկվում է Համակարգում գրանցված և Կանոնակարգով սահմանված կարգով նույնականացված Օգտագործողների համար:

3.3.2. Թողարկողի կողմից յուրաքանչյուր Օգտագործողին նույնականացնող Հաշվառման հաշվում (հաշիվներում) պահվող Էլեկտրոնային փողը յուրաքանչյուր պահի չի կարող գերազանցել 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամին համարժեքը՝ անկախ յուրաքանչյուր Օգտագործողի անունով բացված հաշիվների քանակից:

3.4. Համակարգի թողարկած 1 (մեկ) միավոր Էլեկտրոնային փողը հավասար է 1 (մեկ) ՀՀ դրամի, որի գործողության ժամանակամիջոցը սահմանված է անժամկետ:

3.5. Համակարգում մատուցվող ծառայություններից օգտվելու համար Օգտագործողը պետք է Համակարգում նույնականացվի:

3.6. Համակարգում մատուցվող ծառայությունների տեսակների, ինչպես նաև դրանց մատուցման կարգի, պայմանների և ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվում է Թողարկողի ինտերնետ կայքում, Սպասարկման կետերում և Բջջային հավելվածում: Ցանկացած փոփոխության վերաբերյալ տեղեկատվությունը Թողարկողի ինտերնետ կայքում տեղադրվում է ոչ ուշ, քան փոփոխության կատարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

3.7. Համակարգում մատուցվող ծառայությունների տեսակներն են.

ա) Էլեկտրոնային փողի թողարկում/Հաշվառման հաշվի համալրում (լիցքավորում),
բ) Էլեկտրոնային փողով վճարման իրականացում,
գ) Էլեկտրոնային փողի մարում,
դ) Էլեկտրոնային փողի փոխարկում,
ե) Էլեկտրոնային փողի փոխանցում:

3.8. Համակարգում մատուցվող ծառայությունների համար սահմանված միջնորդավճարների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է Թողարկողի ինտերնետ

կայքում, Սպասարկման կետերում, Բջջային հավելվածում՝ նախքան յուրաքանչյուր գործարքի կատարումը:

3.9. Էլեկտրոնային փողի լիցքավորումը անկանխիկ եղանակով կատարվում է բանկային հաշվից և (կամ) վճարային քարտից:

3.10. Համակարգում Էլեկտրոնային փողի փոխարկումը կարող է կատարվել այլ համակարգի հետ կնքված համապատասխան պայմանագրի հիման վրա:

3.11. Համակարգում Էլեկտրոնային փողի փոխարկումը կատարվում է իրական ժամանակում, ինչը նշանակում է, որ փոխարկման գործարք կատարելիս Օգտագործողի Հաշվառման հաշվից էլեկտրոնային միավորները առցանց ռեժիմում ելքագրվում են և միանգամից հաշվեգրվում այլ համակարգի նշված հաշվառման հաշվին:

3.12. Էլեկտրոնային փողի փոխարկման համար Համակարգը կարող է սահմանել միջնորդավճար, որը նախքան գործարքի կատարումը հասցվում է Օգտագործողին՝ ի գիտություն:

3.13. Էլեկտրոնային փողի փոխարկումը արտասահմանյան Համակարգերի թողարկած Էլեկտրոնային փողով կատարելու դեպքում Համակարգը սահմանում է փոխարկման փոխարժեք, որը նախքան գործարքի կատարումը հասցվում է Օգտագործողին՝ ի գիտություն:

3.14. Այլ համակարգերի հետ կատարված փոխարկումների արդյունքում առաջացած պարտավորությունների վերջնահաշվարկի կարգը, ժամկետները, պայմանները, ինչպես նաև համակարգերի հետ փոխարկումների կատարման սխեմաները սահմանվում են տվյալ համակարգի հետ կնքված պայմանագրերով:

4. Էլեկտրոնային փող թողարկելու արդյունքում ձեռք բերված պարտավորությունների կատարման ընթացակարգ

4.1. Թողարկողը Էլեկտրոնային փող թողարկում է Օգտագործողների կողմից Թողարկողի մոտ վարվող տվյալների շտեմարանում Օգտագործողին գրանցելու գործընթացի միջոցով, որի արդյունքում վերջինիս ձեռք բերած Էլեկտրոնային փողի վերաբերյալ տվյալները մուտքագրվում են Օգտագործողին նույնականացնող Հաշվառման հաշվին:

4.2. Թողարկողն իր թողարկած յուրաքանչյուր միավոր Էլեկտրոնային փողի համար կրում է պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ըստ Օգտագործողի հետ կնքված պայմանագրի դրույթների:

4.3. Համակարգի Օպերատորը պարտավորվում է կատարել Օգտագործողի Հաշվառման հաշվում առկա Էլեկտրոնային փողով ապրանքների ձեռքբերման/ծառայությունների մատուցման արդյունքում առաջացած փոխադարձ հաշվարկներ:

4.4. Ծառայություն մատուցողների նկատմամբ Համակարգի Օպերատորի պարտավորությունները կատարվում են կողմերի միջև կնքված պայմանագրով նախատեսված կարգով:

4.5. Ծառայություն մատուցողների և Համակարգի Օպերատորի միջև կնքվում է ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան պայմանագիր, որով կարգավորվում են միմյանց միջև առաջացող փոխադարձ հարաբերությունները, իրավունքներն ու պարտականությունները և այլն: Պայմանագրում չեն կարող սահմանվել դրույթներ, որոնք հակասում են ՀՀ օրենսդրությանը:

4.6. Համակարգի Օպերատորը պատասխանատվություն չի կրում՝ Ծառայություն մատուցողների մատուցած ծառայությունների, առաքած ապրանքների որակի կամ քանակի կամ ծառայությունների մատուցման/ապրանքների ձեռքբերման այլ պայմանների համար:

5. Հաճախորդների գործառնությունների արդյունքում առաջացած դրամական պարտավորությունների և (կամ) պահանջների վերջնահաշվարկի կատարման ժամկետները, կարգն ու պայմանները

5.1. Ծառայություն մատուցողին Օգտագործողի կողմից Էլեկտրոնային փող փոխանցելու պարագայում Համակարգի Օպերատորը նշված քանակի Էլեկտրոնային փողը փոխանցում է Ծառայություն մատուցողի հաշվին՝ վճարումը հավաստող համապատասխան էլեկտրոնային հաղորդագրություն ձևավորելու միջոցով: Արդյունքում՝ Օգտագործողի Հաշվառման հաշվից կատարվում է համապատասխան քանակի միավորների դուրսբերում և մուտքագրում Ծառայություններ մատուցողի Հաշվառման հաշվին:

5.2. Համակարգի Օպերատորը իր և Համակարգի Հաճախորդների միջև կատարված գործառնությունների արդյունքում առաջացած դրամական պարտավորությունների կամ պահանջների վերջնահաշվարկն իրականացնում է երկու մակարդակով.
ա) Համակարգի Օպերատորի և Օգտագործողի միջև,
բ) Համակարգի Օպերատորի և Ծառայություն մատուցողների միջև:

5.3. Համակարգի Օպերատորի և Օգտագործողի միջև վերջնահաշվարկը կատարվում է իրական ժամանակում՝ գործարքի կատարման պահին փոխանցման կամ մարման միջոցով՝ Կանոնակարգով սահմանված կարգով:
Օգտագործողի Հաշվառման հաշվից միջոցները ելքագրելուց և գործարքը կատարելուց (հաստատելուց) հետո գործարքը համարվում է ավարտված, և տվյալ միջոցները դառնում են Համակարգի կողմից անվերադարձելի:

5.4. Համակարգի Օպերատորի և Ծառայություն մատուցողների միջև փոխադարձ հաշվարկների կատարման կարգը և ժամկետները սահմանված են Համակարգի Օպերատորի և Ծառայություն մատուցողների միջև կնքված պայմանագրով, որը չպետք է հակասի Կանոնակարգով սահմանված պայմաններին և ՀՀ օրենսդրությանը:

5.5. Համակարգի Օպերատորի և Ծառայություն մատուցողի միջև փոխադարձ հաշվարկների կատարման արդյունքում առաջացած դրական տարբերությունը ենթակա է փոխանցման Ծառայություն մատուցողի հաշվին:
Համակարգի Օպերատորը կարող է նախապես սահմանված միջնորդավճարները կամ ծառայություն մատուցելու համար սահմանված ամսական գումարը նախօրոք պահել Ծառայություն մատուցողի հաշվից և մնացած գումարը փոխանցել:

5.6. Ծառայություն մատուցողի հաշվառման հաշվում առկա գումարը ենթակա է վճարման Ծառայություն մատուցողի լիազորած անձի առաջին իսկ հայտի դեպքում, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

6. Էլեկտրոնային փողի գործողության ժամկետը և օգտագործողի հաշվառման հաշվին առկա էլեկտրոնային փողի մարման կարգն ու պայմանները

6.1. Օգտագործողի Էլեկտրոնային փողի մարումը կատարվում է բանկային հաշվին և (կամ) վճարային քարտին փոխանցելու միջոցով:

6.2. Թողարկողը կարող է սահմանել Էլեկտրոնային փողի մարման նվազագույն և առավելագույն սահմանաչափեր:

6.3. Համակարգից Էլեկտրոնային փողի մարման ժամանակ 1 (մեկ) միավոր Էլեկտրոնային փողը հավասար է 1 (մեկ) ՀՀ դրամի:

6.4. Էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման ցանկացած գործարք արտացոլվում է Համակարգի Օպերատորի մոտ վարվող էլեկտրոնային գրանցամատյանում՝ ըստ առանձին Օգտագործողների:

6.5. Օգտագործողի և Թողարկողի միջև կնքված պայմանագիրը կարող է սահմանել առավելագույն ժամկետ, որից հետո Հաշվառման հաշվին մնացորդ չլինելու դեպքում հաշիվը կհամարվի փակված (Հաշվի օգտագործման հնարավորությունը դադարեցված): Մնացորդ ունեցող Հաշվառման հաշիվը չի փակվում:

6.6. Թողարկողն իր ներքին իրավական ակտով կարող է կարգավորել Էլեկտրոնային փողի նույնականացման ընթացակարգը, ներառյալ՝ կոդերի/ծածկագրերի կիրառման կարգն ու պայմանները:

7. Էլեկտրոնային փողով վճարումը հավաստող անդորրագրերի պահպանման, քաղվածքների տրամադրման առավելագույն ժամկետները, կարգն ու պայմանները

7.1. Հաճախորդի կատարած յուրաքանչյուր գործարքի արդյունքում ձևավորվում է անդորրագիր՝ էլեկտրոնային կամ թղթային տեսքով՝ կախված դրա կատարման տեսակից, որը պարունակում է վճարային փաստաթղթերի համար ՀՀ իրավական ակտերով սահմանված բոլոր վավերապայմանները:

7.2. Օգտագործողի կամ Ծառայություն մատուցողի անձնական էջում հնարավոր է տեսնել նախորդ և հաշվետու ժամանակահատվածում կատարված գործարքների մանրամասն նկարագրությունը (հաշվի քաղվածք), տպել անդորրագրեր և այլն: Նշված փաստաթղթերը կարելի է ստանալ Թողարկողի Սպասարկման կետից կամ Թողարկողի առաջարկած այլ ձևով՝ ոչ պակաս, քան ամսական մեկ անգամ:

7.3. Վճարային փաստաթղթի տրամադրումը առաջին անգամ անվճար է, նույն փաստաթուղթը երկրորդ և ավելի անգամ տրամադրելու համար Հաճախորդից կարող են գանձվել միջնորդավճարներ:

7.4. Էլեկտրոնային փողով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա չէ հրապարակման կամ երրորդ անձանց տրամադրման, բացառությամբ օրենքով սահմանված կամ Թողարկողի և Օգտագործողի միջև կնքված կամ Թողարկողի և Ծառայություն մատուցողի միջև կնքված պայմանագրերով նախատեսված դեպքերի:

7.5. Համակարգի Օպերատորը պարտավորվում է ապահովել իր գործունեության իրականացման արդյունքում իրեն հայտնի դարձած՝ գաղտնիք հանդիսացող ցանկացած տվյալի գաղտնիությունը և չհրապարակել այն՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

7.6. Կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը համակարգում պահպանվում է ոչ պակաս, քան ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

8. Մասնակիցների միջև իրավասությունների, պարտավորությունների և պատասխանատվության բաշխման կարգը

8.1. Մասնակիցների միջև իրավասությունների և պարտավորությունների, ինչպես նաև պատասխանատվության բաշխման կարգը սահմանված է Մասնակիցների միջև կնքվող պայմանագրերով, որոնց դրույթները չպետք է հակասեն Կանոնակարգով սահմանված դրույթներին և ՀՀ գործող իրավական ակտերին:

8.2. Մասնակիցների միջև իրավասությունների և պարտավորությունների, ինչպես նաև պատասխանատվության բաշխման կարգը սահմանելիս հաշվի են առնվում ռիսկերի նվազագույն մակարդակի ապահովման, սպառողների շահերի պաշտպանության, Համակարգի մյուս Մասնակիցների միջև հավասար պայմանների սահմանման հանգամանքները:

8.3. Համակարգի յուրաքանչյուր Մասնակից պարտավոր է իրականացնել պայմանագրով իրեն վերապահված պարտականությունները և իրավունք ունի օգտվել իրեն տրված իրավունքներից:

8.4. Մասնակիցները պատասխանատվություն են կրում պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար, եթե դա չի եղել անհաղթահարելի ուժի հետևանք (ֆորս-մաժոր):

8.5. Համակարգի Օպերատորը պատասխանատվություն է կրում համակարգի անխափան աշխատանքի համար: Համակարգում առկա թերությունները, որոնք

խոչընդոտում են Համակարգի անվտանգ և անխափան աշխատանքը, Համակարգի Օպերատորը պարտավորվում է վերացնել ներքին ընթացակարգերով սահմանված ժամկետներում:

8.6. Համակարգի Մասնակիցներն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք (ֆորս-մաժոր), որը ծագել է պայմանագրերը կնքելուց հետո, և մասնակիցները չէին կարող այն կանխատեսել:

8.7. Մասնակիցները պարտավոր են պահպանել Համակարգի Օպերատորի սահմանած անվտանգության կանոնները:

9. Համակարգում Հաճախորդի նույնականացումը

9.1. Համակարգում Օգտագործողի անունով Հաշվառման հաշիվ բացելու և վերջինիս նույնականացնելու համար Հաշվառման հաշվին կցվում է Օգտագործողի բանկային հաշիվ և (կամ) վճարային քարտ՝ վերջինների վերաբերյալ տվյալները գրանցելով Համակարգում: Առանց Օգտագործողի անունով բանկային հաշվի և (կամ) վճարային քարտի տվյալները գրանցելու Օգտագործողի անունով Հաշվառման հաշիվ չի բացվում:

9.2. Կանոնակարգի 9.1 կետով սահմանված կարգով Հաշվառման հաշվի Օգտագործողը կարող է նույնականացվել նաև հետևյալ տվյալների (ներառյալ՝ եթե համապատասխան տեղեկատվությունը հավաստվում է իրավասու փաստաթղթով, ապա ներկայացվում է նաև այդ վավեր փաստաթուղթը) հիման վրա.

9.2.1. ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անուն, ազգանուն, իրավաբանական անձի անվանում,

9.2.2. ֆիզիկական անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գրանցման փաստաթղթի տվյալներ (պետական գրանցման, հաշվառման համարներ):

9.3. Օգտագործողի նույնականացումը կարող է իրականացվել.

ա) Բջջային հավելվածով,

բ) Սպասարկման կետերում, այդ թվում՝ ավտոմատացված եղանակով,

գ) Տերմինալների միջոցով:

9.4. Թողարկողը Օգտագործողի նույնականացման անհրաժեշտ գործողությունների վերաբերյալ պարզ և մատչելի ուղեցույց է տրամադրում իր պաշտոնական ինտերնետային կայքում և (կամ) Բջջային հավելվածում:

9.5. Թողարկողն իր ներքին իրավական ակտով կարող է նախատեսել Հաճախորդի նույնականացման առավել մանրամասն ընթացակարգ:

9.6. Հաշվառման հաշիվը ձևավորվում է Կանոնակարգի 9.1 կետում նշված տվյալների կոդավորման սկզբունքով, այն եզակի է, չկրկնվող:

9.7. Էլեկտրոնային փողի Հաշվառման հաշվի հավաստումը կատարվում է Օգտագործողի նախապես մուտքագրած հեռախոսահամարին կամ էլ.փոստին Թողարկողից հաստատման ծածկագիր ուղարկելով: Եթե Օգտագործողը մուտքագրել է սխալ հեռախոսահամար կամ էլ. փոստի հասցե, ինչի պատճառով չի ստացել հաստատման ծածկագիր, ապա նա պետք է նորից անցնի Համակարգում գրանցման գործընթացը, որից հետո կստանա հաստատման նոր ծածկագիր: Ծածկագրի մուտքագրումից հետո Համակարգն առաջարկում է ստեղծել գաղտնաբառ (PIN կոդ):

9.8. Գրանցման գործընթացից հետո Օգտագործողին տրամադրվում է Հաշվառման հաշվի նույնականացման համար՝ ID, այն եզակի է, չկրկնվող:

9.9. Թողարկողը Օգտագործողին հնարավորություն է տալիս կատարել իր նույնականացնող տվյալների փոփոխություն:

9.10. Համակարգի Օպերատորը պատասխանատվություն չի կրում Օգտագործողի կողմից իր Հաշվառման հաշվի մասին տվյալները, ներառյալ՝ ծածկագիրը/գաղտնաբառը, այլ անձանց տրամադրելու կամ կորստի դեպքում:

9.11. Ծառայություն մատուցողի նույնականացումը կատարվում է իրավասու մարմնի տրամադրած հետևյալ տվյալների (ներառյալ՝ եթե համապատասխան տեղեկատվությունը հավաստվում է իրավասու փաստաթղթով, ապա ներկայացվում է նաև այդ վավեր փաստաթուղթը) հիման վրա.

9.11.1. անհատ ձեռնարկատիրոջ անուն, ազգանուն կամ իրավաբանական անձի անվանում,

9.11.2. իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գրանցման փաստաթղթի տվյալներ (պետական գրանցման, հաշվառման համարներ),

9.12. Վերոնշյալ տեղեկատվությունից զատ՝ Թողարկողն իրավասու է Հաճախորդներից պահանջել նաև նույնականացման համար անհրաժեշտ այլ տեղեկատվություն:

10. Թողարկված էլեկտրոնային փողի դիմաց ստանձնած պարտավորությունների հաշվառման կարգն ու պայմանները

10.1. Թողարկված Էլեկտրոնային փողի հաշվառումն իրականացվում է էլեկտրոնային գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու միջոցով: Թողարկված Էլեկտրոնային փողի մասով վարվում է առանձնացված հաշվառում:

10.2. Էլեկտրոնային գրանցամատյանում նշվում են վճարային փաստաթղթերի համար սահմանված բոլոր նվազագույն վավերապայմանները, Համակարգ մուտք գործելու ամսաթիվը, ժամը, ձախողումների քանակն ու ամսաթվերը:

10.3. Հաշվապահական հաշվառման փաստաթղթերը ձևակերպվում են սահմանված ժամկետում, ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

11. Մարված էլեկտրոնային փողի հաշվառման կարգն ու պայմանները

11.1. Մարված Էլեկտրոնային փողի հաշվառումն իրականացվում է էլեկտրոնային գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու միջոցով: Մարված Էլեկտրոնային փողի մասով ևս վարվում է առանձնացված հաշվառում:

11.2. Էլեկտրոնային գրանցամատյանում նշվում են մարված Էլեկտրոնային փողի մարման համար ձևավորված վճարային փաստաթղթերի սահմանված բոլոր նվազագույն վավերապայմանները, Համակարգից միջոցների ելքագրման ամսաթիվը, ժամը, ելքագրման եղանակը:

11.3. Հաշվապահական հաշվառման փաստաթղթերը ձևակերպվում են սահմանված ժամկետում, ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

12. Էլեկտրոնային փողի թողարկման հետ կապված յուրաքանչյուր գործարքի փաստաթղթավորման և փաստաթղթերի պահպանման կարգն ու պայմանները

12.1. Էլեկտրոնային փողի թողարկման հետ կապված յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ տվյալները պահպանվում են Թողարկողի էլեկտրոնային գրանցամատյանում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքում՝ նաև թղթային եղանակով:

12.2. Էլեկտրոնային փողի թողարկման հետ կապված գործարքի վերաբերյալ տվյալների փաստաթղթավորումը կատարվում է ՀՀ նորմատիվ ակտերով սահմանված կարգով, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն, ոչ պակաս, քան օրենքով սահմանված ժամկետում:

12.3. Համակարգում անընդհատ կատարվում է տվյալների արխիվացում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

Օգտագործողների ներկայացրած բողոքների քննության, դրա արդյունքներով բողոքներն ընդունելու կամ մերժելու պայմանները, կարգն ու ժամկետները

12.4. Օգտագործողների բողոքներին արձագանքելու միջոցառումներն իրականացվում են՝ ՀՀ օրենքներով, իրավական այլ ակտերով և Համակարգի Օպերատորի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

12.5. Համակարգի Օպերատորի հաստատած՝ «Հաճախորդների դիմում-բողոքների ներկայացման և քննության կարգը» հրապարակվում է Օպերատորի պաշտոնական կայքի «Հաճախորդների իրավունքները» բաժնում:

13. Համակարգին անդամակցող նոր Հաճախորդի նկատմամբ պահանջները

13.1. Համակարգին անդամակցող նոր Հաճախորդը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.

13.1.1. **Օգտագործողը պետք է՝**

ա) Կանոնակարգով սահմանված կարգով Համակարգում գրանցի Հաշվառման հաշիվ,

բ) Կանոնակարգի և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան Թողարկողի հետ կնքի Էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման պայմանագիր,

գ) Կանոնակարգով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նույնականացվի Թողարկողի կողմից,

13.1.2. **Ծառայություններ մատուցողը պետք է՝**

ա) լինի իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր,

բ) Կանոնակարգի և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան Թողակողի հետ կնքի պայմանագիր՝ թողարկված Էլեկտրոնային փողը որպես վճարամիջոց ընդունելու իր կողմից մատուցվող ծառայությունների, վաճառվող ապրանքների, կատարվող աշխատանքների և/կամ քաղաքացիաիրավական այլ գործարքի դիմաց,

գ) ապահովի Համակարգի տեխնիկական պահանջներին համապատասխան աշխատելու հնարավորություն, որոնք սահմանված կլինեն Ծառայություն մատուցողի հետ կնքված պայմանագրում,

դ) Կանոնակարգով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նույնականացվի Թողարկողի կողմից,

13.1.3. **Գործակալը պետք է՝**

ա) լինի ընդհանուր ֆինանսական կայուն վիճակում,

բ) Էլեկտրոնային փողի համալրումը և մարումը իրականացնելու համար ունենա անհրաժեշտ լիցենզիաներ,

գ) ապահովի ՀՀ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին օրենսդրության պահանջները,

դ) ապահովի Համակարգի տեխնիկական պահանջներին համապատասխան աշխատելու հնարավորություն, որոնք սահմանված կլինեն Գործակալի հետ կնքված պայմանագրում,

ե) ապահովի բանկային և առևտրային գաղտնիքի պահպանությունը,

զ) Կանոնակարգի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան պայմանագիր կնքի Համակարգի Օպերատորի հետ:

14. Թողարկողի և Հաճախորդի միջև առաջացող ռիսկերի կառավարման մեխանիզմների նկարագրությունը

14.1. Համակարգի Օպերատորն ապահովում է Համակարգի հուսալիությունը: Համակարգում ռիսկերի գնահատման և կառավարման գործառույթները կարող են բաշխվել Համակարգի Օպերատորի և Հաճախորդների միջև: Ռիսկերի կառավարման համակարգը ենթադրում է Համակարգի անխափան գործառնման համար անբարենպաստ հետևանքների առաջացման հավանականության նվազեցման միջոցառումներ, համալիր քայլեր և եղանակներ:

14.2. Համակարգի ռիսկերի կառավարման գործունեության կազմակերպման համար Համակարգի Օպերատորն ըստ անհրաժեշտության մշակում և հաստատում է Համակարգի ռիսկերի կառավարման ոլորտի ներքին փաստաթղթեր, որոնք մանրամասնում են ռիսկերի կառավարման սկզբունքները, ինչպես նաև բովանդակում ռիսկերի կառավարման լրացուցիչ միջոցառումներ ու եղանակներ:

14.3. Ներքին փաստաթղթերը մշակում է Համակարգի Օպերատորը՝ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվային գործող ակտերի պահանջներին համապատասխան: Ներքին փաստաթղթերը սահմանում են Համակարգում ռիսկերի կառավարման համակարգը՝ ներառելով ռիսկերի կառավարման համակարգի կազմակերպումը, Հաճախորդների

կողմից ռիսկերի կառավարման պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն ապահովող անձանց/ստորաբաժանումների գործառութային պարտականությունների բաշխումը, տեղեկատվության փոխանակման և համագործակցության կարգը, որն անհրաժեշտ է ռիսկերի կառավարման համար: Տվյալ փաստաթղթերը Համակարգի Օպերատորը կարող է տրամադրել Հաճախորդներին՝ ի գիտություն:

14.4. Հաճախորդները ինքնուրույն են իրականացնում իրենց գործունեության տեսակին բնորոշ ռիսկերի կառավարումը և պատասխանատվություն են կրում դրանց իրացման հետևանքների համար:

14.5. Պարբերաբար իրականացվում է՝
ա) ռիսկերի կառավարման համակարգի արդիականացում,
բ) ռիսկերի կառավարման համակարգի պահանջների կատարողականի վերահսկողություն:

14.6. Օպերատորը Համակարգի անխափանության ապահովման գծով իրականացնում է Հաճախորդների գործունեության համակարգում՝ Կանոնակարգի և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

14.7. Համակարգի անխափանությունը ապահովելու համար Համակարգի Օպերատորն իրականացնում է.
1) Էլեկտրոնային փողի փոխանցման և մարման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում ու պահպանում Համակարգում,
2) Հաճախորդների վերջնահաշվարկների մասին տեղեկատվության հաշվառումն ապահովող գործառնական և տեխնոլոգիական միջոցների, սարքերի, տեղեկատվական համակարգերի շահագործման խափանումները թույլ չտալուն ուղղված միջոցներ, իսկ նշված խափանումների առաջացման դեպքում՝ դրանց վերացմանն ուղղված միջոցներ,
3) գործառնական և տեխնոլոգիական միջոցների, սարքերի, տեղեկատվական համակարգերի խափանումների պատճառների վերլուծություն, դրանց վերացմանն ուղղված միջոցների մշակում ու իրականացում,
4) խափանումների դեպքում գործառնական և տեխնոլոգիական միջոցների, սարքերի, տեղակատվական համակարգերի գործառութային հնարավորությունների ապահովում (կայուն խափանման նկատմամբ), շահագործման թերությունների բացահայտման նպատակով դրանց թեստավորում, թերությունները բացահայտելու դեպքում՝ դրանց վերացմանն ուղղված միջոցների կիրառում,
5) Համակարգում կատարվող գործարքների մոնիթորինգ,

6) սեփական ֆինանսական կայունության, այսինքն՝ իրացվելիության ապահովում, տնտեսական նորմատիվների պահպանում, ֆինանսական ցուցանիշների ապահովում՝ ՀՀ ԿԲ պահանջներին համապատասխան,

14.8. Համակարգի Օպերատորն իրավունք ունի ձեռնարկել այլ միջոցներ՝ ուղղված Համակարգի անխափան աշխատանքի ապահովմանը:

14.9. Համակարգի անխափանության ապահովման համար Համակարգում Ծառայություններ մատուցողները և Գործակալները իրականացնում են.
Ա. իրենց աշխատանքներում խափանումների դեպքում գործառնական և տեխնոլոգիական միջոցների, սարքերի, տեղեկատվական համակարգերի գործառութային հնարավորությունների պահպանման ապահովում (կայուն խափանման նկատմամբ), շահագործման թերությունների բացահայտման նպատակով դրանց թեստավորումը, թերությունները բացահայտելու դեպքում՝ դրանց վերացմանն ուղղված միջոցների կիրառում և տեղեկացում Համակարգի Օպերատորին,
Բ. իրենց հայեցողությամբ՝ այլ միջոցներ:

15. Էլեկտրոնային փողով գործառնությունների իրականացումը ապահովող սարքավորումներին ներկայացվող պահանջները, սպասարկման իրականացման կարգն ու պայմանները

15.1. Էլեկտրոնային փողով գործառնությունների իրականացումը ապահովող սարքավորումները պետք է ապահովեն Համակարգի բնականոն և անխափան աշխատանքը և համապատասխանեն ՀՀ կենտրոնական բանկի սահմանած պահանջներին (դրանց առկայության դեպքում):

15.2. Սարքավորումների սպասարկումն իրականացվում է Համակարգի Օպերատորի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և պայմաններով: